

Քեկեղեցիներ



ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍԲԸ
ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

(2 հոկտեմբերի 1977 թ., Կիրակի)

Ձերդ Սրբություն,

Մեծ ուրախությամբ պատասխանում եմ Ձեր սրտագին ուղերձին և Ձեր ողջույնի խոսքերին:

Խորապես շնորհակալ եմ ցույց տրված այս սրտաբաց մեծարանքի համար՝ ուղղված ոչ միայն անձնապես ինձ, այլ նաև այն եկեղեցուն, որին ներկայացնում է մեր պատգամավորությունը:

Ձեր եկեղեցու մեծ սրբի անունը կրող այս շքանշանը ևս կրելու ևս հպարտությամբ որպես միության ամուր կապ մեր երկու եկեղեցիների միջև և որպես երջանկագույն հուշ Հայաստան և ս. Էջմիածին մեր այցելության:

Մեր երկու եկեղեցիների պատմությունը սկիզբ է առնում պատմական հնագույն օրերից: Դուք այստեղ այդ պատմությունը ետ տանելով հասցրիք մինչև ս. Թադևոսի և ս. Բարթողիմեոսի օրերը: Մենք չենք կարող պընդել, որ մեր եկեղեցին ուղղակի իմաստով առաքելական ծագում ունի: Այսուամենայնիվ մենք ուրախ ենք գիտենալու, որ քրիստոնեության սերմերը Բրիտանիայում ցանվեցին մեր Տեր Հիսուս Քրիստոսի հարությունից շատ կարճ ժամանակ հետո: Ավելին՝ մեր համայնքը, որը պահպանում է առաքելական հավատքը, հաստատվել է Աստվածաշնչի, Հանգանակների, Խորհուրդների ու առաքելական պաշտոնի վրա, և այդ հանգամանքը շատ սերտ մի կապ է հանդիսանում՝ մեզ կապելու ձեր մեծ եկեղեցուն:

Ձերդ Սրբություն, մեզ բոլորիս համար շատ մեծ ուխարություն և հա-



ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ. ՔԵՆՇՐԲԵՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԱՐՏԱՍԱՆՈՒՄ Է ԻՐ ՈՂՋՈՒՑՆԻ ԽՈՍՔԸ

նույն է հանդիպել անձամբ Ջեզ, Ջեր արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների, հոգևորականության և ժողովրդի հետ:

Ինչպես այս առավոտ ևս ասացի ձեր Մայր տաճարում, մենք մասնավորաբար ուրախ ենք, որ մեր այցելությունը զուգահեյպում է Ձեր գահակալության 22-րդ տարեդարձին:

Մենք մեծապես ուրախ ենք նաև, որ մեր այցելությունը զուգահեյպում է աշխարհի զանազան մասերից այստեղ ժամանած ձեր եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների ժողովին: Այսպես է, որ այս սուրբ միջավայրում մենք հնարավորություն ունեցանք հանդիպելու ձեր եկեղեցու առաջնորդների մեծ մասի հետ:

Ձերդ Սրբությունն Իր ուղերձի մեջ նշեց Կ. Պոլսի հայոց պատրիարքի նամակների մասին, որոնք ուղիղ հարույր տարի առաջ ուղղվել էին իմ նախորդներից մեկին՝ Տեղապետ արքեպիսկոպոսին: Որքա՜ն ուրախ պիտի լինեք նա, և նույնպես որքա՜ն երջանիկ պիտի լինեք Դավիդսոն արքեպիսկոպոսը, երբ նրանք երկուսով այստեղ լինեին այսօր: Մենք հավատում ենք սրբերի հետ հաղորդակցության, այնպես որ մենք կարող ենք հավատալ և հուսալ, որ նրանք այժմ մեզ հետ բաժանում են այս մեծ պատեհության ուրախությունը:

Լոնդոնի եպիսկոպոս դոկտ. Էլիսոնը խնդրեց ինձ Ձերդ Սրբությանը բերել իր ողջույններն ու հարգանքները:

Մեզ համար մեծ ուրախություն է մեր մայրաքաղաքում և Մեծ Բրիտանիայի այլ վայրերում կարողանալ ողջունել բազմաթիվ հայերի: Մեզ համար մասնավոր ուրախություն է նրանց տրամադրել եկեղեցիներ իրենց պաշտամունքի կատարման համար:

Մենք, Ձերդ Սրբություն, նախանցյալ օրը խորապես հուզվեցինք, երբ ծաղկեպսակ զետեղեցինք Միծեռնակաբերդի սուրբ վայրում: Այդ սրբավայրը առանձնապես մեզ հիշեցրեց 1915 թվականի ցեղասպանությունը, բայց նաև՝ այլ ցեղասպանություններ, որոնք գործադրվել են մեր ապրած կյանքի ընթացքում, հիշեցրեց նաև մի ազգի կողմից ուրիշ ազգի հանդեպ կաշտարված վայրագություններ այս ողբերգական դարի անկման ժամանակաշրջանում:

Մենք մեր ձեռքերը միացնում ենք ձեր և բարի կամքի տեր բոլոր մարդկանց ձեռքերին՝ արդարության վրա հիմնված խաղաղության ի խնդիր: Ջեզ հետ մենք էլ ենք սպասում տեսնելու սպառազինությունների մրցավազքի վախճանը, որովհետև այդ մրցավազքը ոչ միայն վտանգ է ներկայացնում մեր աշխարհի համար, այլև միաժամանակ այն ոճբալին մի վատնում է աշխարհի հարստությունների: Մենք պետք է աշխատենք արմատախիլ անել բոլոր այն պաշմանքերը, որոնք մարդկությունը առաջնորդում են դեպի պատերազմ: Ես պետք է մատնանիշ անեմ աղքատությունը, անգրագիտությունը, տգիտությունը, հիվանդությունը, մարդկային մեղքերը, որոնցից զերծ չենք նաև մենք: Այս բոլորն ստեղծում են իրավիճակներ, որոնք տանում են դեպի պատերազմ: Այս բոլորն այն նախադրյալներն են, որոնք խորտակում են արդարությունն ու խաղաղությունը: Մենք մեր ամբողջ հոգով պետք է աշխատենք վերացնելու պատերազմ ծնող բոլոր պատճառները:

Քրիստոսից շատ դարեր առաջ մի ծեր հրեա նաչեց գիշերային երկընթին: Նա այնտեղ տեսավ լուսինն ու աստղերը: Նա դիտեց նաև երկնքի անհունությունը: Եվ նա մի հարց տվեց, մի հարց, որ մենք բոլորս էլ տալիս ենք ժամանակ առ ժամանակ. «Ի՞նչ է մարդը, որին դու կարևորություն ես

տալիս. կամ ի՞նչ է մարդու որդին, որին դու հաշվի ես առնում»: Այս հարցին դուք ի՞նչ պատասխան կտալիք: Դուք կարող եք ասել. «Մարդը ոչինչ է, նա այնքա՛ն փոքր է՝ համեմատած միջոցի և ժամանակի անհունության հետ»: Բայց ճշմարտապես այս չէ այն պատասխանը, որ սաղմոսերգուն տվեց: Նա ասաց. «Որքա՛ն մեծ է մարդը: Աստված նրան ստեղծեց մի փոքր ավելի ցածր, քան հրեշտակները: Եվ Աստված նրան թագադրեց փառքով ու պատվով և նրա տրամադրության տակ դրեց բնության բոլոր գեղեցկությունները»:

Ես հավատում եմ, որ եկեղեցու պարտականությունն է մշտապես կրկնել սաղմոսերգուի հարցը: Մենք շատ փոքր ենք. մեր կյանքը չափազանց կարճ է. ի՞նչ ենք մենք. ի՞նչ է տարբերությունը մեր և կենդանիների: Պատասխանը, որ տալիս է քրիստոնեական հավատքը, կատարելապես հստակ է. այն, ինչ եզակի է դարձնում մեզ Աստուծո ստեղծած աշխարհում, մեր պատասխանատվության զգացումն է, այսինքն՝ այն փաստը, որ մենք կարող ենք պատասխանել Աստծուն, երբ նա խոսում է մեզ հետ: Դրանով է մեր արժեքը, և այդ արժեքն է միայն, որ վերջնականապես կարող է չափվել Քրիստոսի խաչի լույսի մեջ: Հետևաբար, երբ ես նայում եմ Քրիստոսի խաչին, դրա մեջ եմ տեսնում մարդու արժեքը Աստծու համար: Աստված բավարար չափով մտածել է իմ մասին, որ ուղարկել է Իր Որդուն, որպեսզի մեռնի ինձ համար: Այս է քրիստոնեական պատգամի բուն էությունը: Սրանով է մարդու արժեքը: Մարդու արժեքը՝ Աստծու համար, մարդու արժեքը՝ իր մերձավորների համար:

Ամեն փիլիսոփայություն, քաղաքական ամեն սիստեմ պետք է սրանով գնահատվի և միայն սրանով: Եվ եթե այդ չէ մեր գնահատանքի հիմքը, նշանակում է, որ մահվան սերմերը և կործանումը այդ սիստեմի մեջ են:

Այս է ահա քրիստոնեական եկեղեցու հավատքը: Այս հավատքին մենք պետք է հավատարիմ մնանք Աստծու օգնականությամբ: Այս հավատքի՝ համար պետք է վկայենք, ինչպես արել են սրբերը, դարերի արշալույսին, Հայաստանում, Բրիտանիայում, ինչպես որ այժմ էլ մարդիկ մահվան գնով վկայում են աշխարհի բազում մասերում: Թող Աստված մեր երկու եկեղեցիները հավատարիմ պահի այդ Պատգամին:

Ձերդ Սրբություն, մի անգամ ես շնորհակալություն եմ հայտնում մեզ բոլորիս ուղղած Ձեր ողջույնի խոսքերի համար, բարեմաղթության և հանդիսությունների այս ուրախության և այն հոգևոր հարստության համար, որ ես վայելեցի այստեղ գտնվող իմ եղբայրների հետ:

Մենք մի-համեստ նվեր ունենք Ձեզ մատուցելու. դա մեր Քենթրբերիի տաճարի նկարի մի հին վերատպությունն է:

Հուսով եմք, որ ինչպես անցյալում Ձեզ ողջունեցին Լոնդոնում, Լամբերթի պալատում, այդպես էլ կկարողանանք Ձեզ ողջունել Քենթրբերիի տաճարում և այնտեղ միասին աղոթել մեր հասարակաց Տիրոջ անունով:

